

Խուրեմ գացած լրագրաց հանրու
ծախքը խմբագրութեան վրայ է:
Լրագրոյս վերաբերեալ նամակ
կամ որ-էն ինչ գրութիւն խմբագր-
ւորութեան պիտի ուղղուի, Կ. Պո-
լս. Զինկի խան, Մասիի գրասեն-
տակը:
Եւստիք ծախքը Հիմնութեամբ ծա-
խան ընդունուի:

LEU G. H. R.

[illegible]

իրեն կտակաւորաբար՝ իրեն փոխա-
նորդ կանգնեցէ և Պօլսոյ Ս. Պատ-
րիարքն և անոր յանձններէ հար-
ժադրութիւնը :

Այս վերջին զրոյցը մինչև ի՛նչ
ատիճանս ստուգութիւնն ունի, յայտ-
նի չէ մեզ, որովհետև վաւերական
տեղեկութիւն մը կամ հրատարա-
կութիւն մը չկայ այս մասին :

Բայց որովհետև լրագրութեան
չենք գիտեր ի՛նչ աղբիւրէն առնելով
հրատարակած են, մեք ալ իրեն հա-
ւանական լուր կը հրատարակենք,
գովելով կտակարարին ազգասիրա-
կան ազնիւ խորհուրդն, եթէ իրօք
կտակարար մը կայ, և կը մաղթենք
որ ժամ առաջ իրականութիւն դը-
նէ յօգուտ և ի պատիւ ազգին, որ
ինչպէս յայտնի է, մեծ պէտք ունի
դարուս պահանջած մտաւորական
հանգամանքներն ունեցող հմուտ,
ազգասէր, առաքինի և անձնուէր
հովուաց :

Ուրիշ առթիւ կը թողունք բա-
ցարեղ, թէ ինչ տեսակ կրթութիւն
հարկ է մեր կզերին, որպէս զի կա-
թոլիկ կղերիկն պէտք զատ մարմին մը
չկազմէ ազգին մէջ տարբեր ուժով
զոյգութեան հարադատ գտակ, իրենց
շահն ու պատիւը ժողովրդեան շա-
հուն մէջ միայն փնտռեն, ըստ օրի-
նակի մեր նախնի Ս. հայր :

Փարիզի ազգայնաց հոգեւոր հովիւ,
Աբթ. Տ. Թոմասէնէն Հիւնքեար Պէ-
յէնանեանի գրած մէկ նամակէն կի-
մանանք, որ հռչակաւոր Պ. Ռատու-
նիկ Տէր Մարգարեանց, որ տարի ու
կէնէ ի վեր բանտարկեալ էր ի փա-
րիզ, մայիս 19/31 ին մեռեր է :

Խորագրաւորեալ Մատնի պատուա-
կան լրագրոյ :

Եթէ կայ աշխարհի վերայ մի այնպիսի
մեծ իր՝ որ գմբազ յիւնք գրաւէ, իւրով
միայն գրադեցնէ, իւր վերայ միայն խո-
նէր տայ, և միմիայն ինքն ընդհա-
նուր մարդկութեան յոյսերն պարտաւ,
ԱՊՊԱՍՏՆ, է :

Այս մեծ իրին համար աշխատած են
մահու չափ, քահանայապետը և քահա-
նայք, թագաւորը և իշխանք, ուսումնա-
կանք և այլք, հարուստ դանձր պար-
պուրներ են այդ մեծ իրն ունենալու հա-
մար, և տակաւին կը պարտուին և պէտք
է պարտուին իւրաքանչիւր ազգաց մէջ :

Այս մոգական բառը՝ յորում ամիս-
փին միով բանիւ թէ՛ անանց և թէ՛ ան-
ցաւոր կենաց երջանութիւնը կամ թը-
նածութիւնը, ամենեւնի հզօր և ամենեւնի
ցիտուն մարդերն անդամ իւր խոնարհ
կամակատարն ըրած է պատգամ և ար-
դարաւոր հատուցումը : Անցեալն անա-
չաւ փկայ է և Ազգաց պտուղութիւնը հոս-
տատենք զայն :

Ամեն անհատ և ամեն հայր իւր ան-
ձին և իւր զերդատանին վերաբերու-
թեամբ պարտաւորապէս աշխատած են
և կաշխատին միշտ մի բարեւաւ ստա-
գայ պատարասեալ և ո՛ր անձտուր կամ
ո՛ր հայրն որ աշխատած է և նա անշուշտ
փայլած է իւր աշխատութեան տառա-
թեբը : Այն աշխատութիւնն որ անսլը-
տող է :

Բիւթանական հայութիւնն ունեցած
է երբեմն այնպիսի հայրեր, որք անձնուի-
րաբար աշխատած են բարոյական և նիւ-
թական մեծ ամեծ օգուտներ յառաջ բե-
րելու :

Այս հայրերուն ցանկին մէջ նշանու-
ռեցաւ վերջին ժամանակներու մի այն-
պիսի անուն, զոր ինձ հետ ամեն Բիւ-
թանացի Հայ մեծ յարգանքը և սրտի
բուռն բարակամայն կընկռուէ :

Թող ներուի ինձ ըսել թէ՛ Ներսէս ա-
նունը նուիրական անուն ո՛ր է Հայ ազգին
համար : Ինչպէս անցեալ դարերու՝ նոյն-
պէս և ներքոյ դարուս մէջ Ներսէսներն

էին և են ազգին բարոյական կենտրոն մա-
տակարարոյ :

Ներսէս սրբազան՝ Վ. Պ լոյս աթմա-
նակաւորեալ Ս. Պատրիարք հայրն՝ այն
հազուադիւս Անձնակն մին է, ոչք թէ՛
ներկայ և թէ՛ բացակայ եղած ժամանակ
թէ՛ մօտէն և թէ՛ հեռուէն, իրենց յանձ-
նուած հօտին պիտոյն հայրաբար հոգա-
լու չեն դանդաղիր :

Աստուածային ծայնն երբ կաշից դնա-
լի բարձրագոյն գահն Պատրիարքական,
զգալով զոչ ալ իւր վերայ ծանոթացած
պարտերն, զգաց որ Բիւթանական
աշխարհէն պիտի բաժնուի, և առանց
վարանելու՝ իւր սիրելի հօտին մի այն-
պիսի հովիւ թողուց որ ամենեւեմ նման
է իրեն, Ս. Պրիկ հարադատ գիմանու-
թիւն հօրն բերէ, և որ երբեք Ներսէս
Ամեն. Սրբազանութեան բացակայութիւնն
զգացուցած չէ : Ներսէս Բարձր Սրբազ-
նութեան ձգած փոխանորդն՝ որ իւր իսկ
ձեռնադրուէն է, Գեր. Ստեփաննոս Ծ.
վարդապետ Յովակիմեան, որքարէն
հզօրեւ պատկեր կամ տարալի է այն հո-
յակաւ անձին, Ներսէս սրբազանին,
որոյ գլխաւոր սկզբունքն էր հաստատուն
եկամուտներով ուսումնասիրել ի դոյ
անել, Ամեն. Ներսէս սրբազան այս
սկզբունքը գործադրեց Բիւթանիոյ մէջ,
և մեկնած ժամանակ առանց իւր փա-
խանորդին. իսկ սա՝ իբր հաւատարիմ
աւանդապատճ սկսուեալ բեղմաւ որիւ իւր սրբ-
ւանդը :

Ներսէս սրբազան բանիւ և արդեամբ
զործեց, սա ալ իւր հօր նմանեցու :

Ներսէս սրբազան թէ՛ ի Բիւթանիոյ
թէ՛ աստ յԱտարազար և թէ՛ Երեւան
զիւր այց եղած ժամանակ իւր եղական
անձին օրինակուն կը իրթէր իւր ժող-
ովոյդը, սա ալ նմին նման, Նա՛ ստա-
կով օժանդակեց ուսումնասիրողներու,
սա ևս Նա զոչուած գարտնչերը բա-
ցաւ, սա ալ իւր մասնաւոր աշխատու-
թեամբ այն բացուած դպրոցները թողա-
կաւոր վերածեց խիստ գեղեցիկ արա-
մադրութեամբ : Նա զիւրաքանչիւր և
կոծ ժամանակ զգալով տեղւոյն Ազգ.
ուսումնասիրելի դրամական պէտքն և
Ազգ. իգական սեռին բարոյական եր-
թեկեւորութենէ կրած անտոտուութիւնը,
Ազգ. բազմանեց իրաւութեամբ՝ յատկա-
գիծք գծեց իւրաքանչիւր Ազգային ա-
ւանձինն ինչպէս ի անանց կամուտ
նուէրներն ընել տալով, սա ալ յիշեալ
բազմանեց ինքնութեան դործն օրհաւ և
փոքր մի ևս և ահա կամրջմանս դործն
որով թէ՛ Ազգ. իգական սեռին պատիւն
և թէ՛ Ազգ. ուսումնասիրելի կեանքը կա-
պահուի :

Ահա այս երկրորդ անգամ է որ քա-
նի փոխանորդական ծանր պաշտօնն ըս-
տաններ է, քաղաքին այց եղած և դոր-
ծին զուլան անցած՝ ամեն խոշ և խոտ
արհամարհելով սկսած է դործել : Մեծ են
քաղաքացեւոյ սրտազին շնորհակալու-
թիւնը մտնաւորէ երկու մեծ դործոյ
համար. նախ, Ազգ. ուսումնասիրող բաց
պահելուն և անոր արժանաւոր դասա-
տու մի (Գ. Շիրինեան էթիկան) գտնե-
լուն, և երկրորդ Ազգ. բազմանեց գոր-
ծին ձեռնադրուելուն կամ զայն ի գլուխ
հանելու փայլել կրեւն համար :

Այս երկրորդ անգամ ստեղծ այցե-
լութիւնն էր որ նուստիս առիթ տուաւ
զիւր ձեռք առնուլ. զի ամենայն 19րդ
օրումն իրիկունը ի ժամ 11 մտաւ քա-
ղաք, այն իրիկունն Բաղրաշահ Պատուա-
թան յարգելեաց հետ սովորական տե-
սութիւնն ընելէ ետք հանդստացաւ, և
յաջորդ օրն ստուտանց Ազգ. ուսումնա-
սիրելի սրահը մտաւ, ուր նախ իւր մեծ
շնորհակալութիւնն յայտնելէ ետք ի մա-
սին զիմուսրութեան տանուց Ազգ. ու-
սումնասիրելի, համառօտ բաց ընտիր ա-
տենաբանութեամբ մի բացառեց այն
նախնական յարկին մէջ մտնելուն հար-
ժառեթը, և իրենց առ այն ունեցած
պարտքերին. արտասուեց Ներսէս Գեր.
Սրբազանութիւնն երբ ուսումնասիրելի ա-
նեղէն մին՝ Պօղոս Ա. ձինձհանեան՝
հետեւեալ ուղերձը կարգաց ի զիմաց իւր
ընկերակցաց զոր հրատարակելիք խնդ-
րեմ :

Ժամ է արդ, խորագրէր Տէր : զերջ
տալ նամակիս, խոստանալով ընդ հուս
մանաւոր տեսութիւն մը ընել Ազգ. ու-
սումնասիրելի պաշտօնէլի տեսչայ և ներ-
քին անօրէնութեանց նկատմամբ, որք
ոչ նուազ ուշադրութեան արժանի են :

Հաճեցէ՛ք հրատարակել այս շնորարար
և ուսումնական Ս. Հօր գործքերն յօ-
րինակ այլոց և ի քաղաքներէ Ներսէս
Սրբութեան :

1875 մայիս 28 Մնամ աղօթարար
Ատարազար Ի զիմաց ընդհ. աշակերտաց
Պօղոս Ա. ձինձհանեան

ՈՒՂԵՐՁ

Աս Գերապետի և շնորհապարգ Տէր
Ստեփաննոս Ծ. վարդապետ արժանըն-
տիր Առաջնորդական փոխանորդ հայր
մեր :

Գերապետի Ս. Հայր :

Երջանիկ է մեզ համար այս ժամն,
որ Զեր գերապետութիւնն հովուա-
կան այցելութիւն կը տայ իւր հօտին և
այս առիթ նուիրական յարկիս տակ ու-
սում առնող մանկան կողմէն ի ժպիտ
և իւր հայրական օրհնութիւնն աննց կը
չնորէ, նոր խրատայ և նոր աշխոյժ
ներշնչելով : Աստի և մեք այն վարկե-
նիս մէջ նոյն սուրբութիւնը կը գաղթե-
ին որ կըզգան հայրերին բացակայ եղող
մանկանք իրենց հօրը դաւաճող տեսնե-
լով :

Իւր-Ս. Հայր, ազգային մանկան,
որ ազգին առաջայն և ազգին յուսոյ
ծաղիկներն են, շնորհիւ այն խոնարհան
լուսոյն՝ որոյ մատակարարութեան մեծ և
փափուկ հոգը նախ ձեր խնամման հայրու-
թեան անձնաձիր գործունէութեան և
խոշեմ ու արթուն հովուութեան վրայ
մարմնացած կը տեսնէ, և ապա թաղ-
համայնութեան խորհրդոյն, ապա հոգաբար-
ձութեան և մեր դաստոտաց հոգատա-
րութեան զիմուտը առարկայն եղած,
յաւէտ շնորհապարտ կըզգայ ինքզինքն
սա Զեր. հայրութիւնի զիմուտով որ ազ-
գին կրօնական միութիւնն և նիւթական
ու բարոյական յաւաքող խոնարհութիւնը մի
միայն դաստարակութեան մէջ է, այն
դաստարակութեան որ Զեր մտածու-
թեան և զգայմանց գրեթէ միակ աւար-
կայն եղած է :

Ներքեցեք ուրեմն, Գեր. Ս. Հայր, որ
Զեր դասակներն ալ իրենց ուրախութիւ-
նն հասարակաց ուրախութեան հետ
խառնելով ներկայիս միջոցաւ Զեր գերա-
պետութեան մատուցանեն, և այնու
Զեր դարստը շնորհաբերեն, սրտերնին
այնպիսի իրաւունք լի՝ զորս իրաւուն կըզ-
գան, բաց չեն կրնար բացառելու : սա-
կայն և այնպէս ըստայն են թէ իրենց
ըզնից այս դուռնեաց բացառութիւնը
որ Զեր տնկած, մշակած, խնամած և
զարմանած սպաւն մէկ նախախտիւնն
է, Զեր հայրութեան ըմպն անտարժ-
չալիւ թուի, որպիսի որ ալ տակաւին հա-
տունաւոր պէտք ունենայ :

Մնամ Գեր. Ս. Հայրութեանը
20 մայիս 1875 Ամենախոնարհ որդիք
Ատարազար Ի զիմաց ընդհ. աշակերտաց
Պօղոս Ա. ձինձհանեան

ՄԱՍՆԱՌ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

Ի վերայ հանգսեւեալ Ներսէս Ե Երբէ հա-
նաքիւնի մեծայն Հայաց, պարտաւոր յա-
նաքիս անձնէ ուսման, որ Բիւթան հօ-
գաբար է Պարսէց պարսեպոյն ժամանակ :

(Երբ. Դ. Ե. 1694)

« Այլ և աւելի քան դոյնս՝ սոյն
յիշեալ արքեպիսկոպոսն յաւուրս
հանգուցեալ կնեալ Յիշմանովին գը-
տանեցեալ է ընդ Բարձր փառաւո-
րագոյն զօրաց Ռուսաց յիշխալիտօ-
պօլ զհետ հանգուցեալ Բազմանէս
արքեպիսկոպոսին թիֆլիզու, ո՛չ իւ-
րեւ պաշտօնեայ նորա, այլ իւրեւ գոր-
ծակից նորա և առաջին կառավար
գործոյ վերաբերելոյ առ հանգուց-
եալ նախորդն իմ. ըստ որում մի
նպատակ էր երկուսն նոցա յայնմ

ժամանակի, յաղթութիւն զօրաց Նո-
րին կայսերական մեծութեան և ու-
զատութիւն հայրենեաց Հայաստա-
նի և Գանիէլ պատրիարքի, այլ և
յիշեալն ընդ սրբազան Բարսեղ և
Թովհանէս արքեպիսկոպոսաց ի վե-
րայ միևնոյն նպատակի, ո՛ր և երե-
քին սոքա միտքան գործակցու-
թեամբ ցուցեալ են զյատուկ հարա-
զատ իւրեանց յերմեռանդութիւնն
առ աթոռ ողորմութեան մեծ կայ-
սերութեան ամենայն Ռուսաց, մա-
տուցանելով զօրաց նորին կայսերա-
կան մեծութեան յարդեանց աթո-
ռոյն 12000 փութ ցորեան և ալիւր,
25 փութ բարութեւ ևս և զայլ մուսա-
յութիւնն, որք չեն ի ծածուկ ի
բարձր գերագոյնց ինկրայաց և ի
բաղմութեանց հաւատարմաց Նորին
կայսերական մեծութեան, որոյ առ
զագաւ և ամանց արժանաւորաց
գիր ևս գտանի. որ վասն և յառաջ
քան զդուրստն իմ այսր՝ հակառա-
կորդն Պատրիարքութեան կայսերի
հանգուցեալ Գանիէլ պատրիարքի՝
սուտ պատրիարքն Գաւիթ ի ներ-
կայութեան Ապառմիթիոյ Շահգա-
տային վկայ կացուցանելով զբազմու-
թիւն երեւելի խոնարհ Պարսից յա-
ղագս սոյն այս նշանակեալ ծառա-
յութեանց Ներսէս արքեպիսկոպոսի
զօրաց նորին կայսերական մեծու-
թեանն ևս և այլ զանազան նշանաց
հաւատարմութեան նորա առ Սա-
ւածադութեւ բարեւար տէրութիւն
Ռուսաց, մինչև ի մահ զսա մատնել
էր յօժարեալ, աղաղակելով միայն-
գամայն թէ՛ «որդի է սա Ռուսաց և
թշնամի տէրութեան ձերոյ,» և այլն
և այլն, յորժամ ի չարաչար մատնու-
թեանցն անտի յատուկ շնորհ ու-
ղորմութեանն Աստուծոյ էր պաշտ-
պանեալ զսա : Աւելի քան զայն՝
զհաւատարմութիւն սորա առ նորին
Աստուածաման բարեբար կայսրու-
թիւնն Ռուսաց, յամի 1810. ի 13
յուկնարի առաւել ծանր անարգա-
նօք բանտարկեալ յիշեալն կոց-
եալ է ի բանտի մահու ակնկալու-
թեամբ զաւուրս տեւի զ40, և ըզ
կրնի օգնականութեամբ Աստուծոյ
աղաւտեալ է բազում գեղեցիկութեամբ
ծախելով յորդեանց թովտոյ սրբոյ
կաթոլիկէն Էմիլիանի նաև զդրամն
աւելի քան 4500 թուման : Այլ և ի
գալուտեան Գրաթի Գուդովիչին բարձր
փառաւորագոյն զօրօք յիշեալն, գո-
լով առաջին ի կառավարութեան ա-
թոց Արարտեան՝ յամենայն ինք-
եան առաջարկեալ իրողութիւնս ի
Գրաթի Գուդովիչին, ծառայեալ էր
արժանաւոր հաւատարմութեամբ,
ոյր վասն և Գրաթին արարեալ էր սը-
մա զխոստումն վասն Պնակի :

« Ահա՛ հանգամանք և պարա-
գայք անձին և գործոց և այլ որ-
պիսութեանց յիշեալ գերապետի
սրբազան Ներսէս արքեպիսկոպոսի
Աշտարակեցոյ Շահադիդեան կամա-
րականի մինչև ցայն ներկայ սոմ՝ Տեա-
ռէն 1814 ի 18 փետրվարի այսոքեք
են որպէս պատմեցան. ի հաստա-
տութիւն որոյ՝ մերովս պատրիար-
քական կնքով ամրացուցեալ ստա-
րագրեցաք զսոյն գիր, և առաքե-
ցաք ի բարձրագոյն խորհուրդանն
զիւ և անդանօր կնքալ ստորագրեա-
ցին անդամք բարեկարգութեան կա-
ռավարիչ սուրբ ժողովոյն :

Գրեցաւ յամի Տեառն 1814 ի
փետրվարի 18. Իրիւստոսահիմն երկ-
նահանդէս Սայր Թովման ամենայն
Հայոց ի սուրբ կաթոլիկէն Էմիլիա-
նին : »

Պարսէց պարսեպոյն Արարտեան
և Գանիէլ Հայոց և Կաթոլիկ

